Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.11.2022թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Վ. Պողոսյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,

Հ. Ղազարյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Ա. Մարտիրոսյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

Կ. Սիրունյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի տնտեսվար,

Գնումները համակարգող

Վ. Սիմոնյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության մասնագետ,

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ

Վ. Հարությունյան – ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության պետ:

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «Գապ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.3.2, 4.3.3 կետերում և 4.4.2, 4.4.3 կետերում համայնքը և վարչատարածքային մավորը սխալ են լրացված :

2. «ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերի 2.6 կետով պահանջվող՝ մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը:

3. Ա/Ձ Սամվել Կոշեցյանի կողմից ներկայացված հայտի ոչ մի հավելվածում չկա մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը): Բացի այդ, բոլոր փաստաթղթերը ստորագրված են մի անձի կողմից, ով լիազորված չէ այդ գործողությունները կատարելու համար:

Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ հրավերով պահանջվող կշիռները՝ տոկոսային հարաբերակցությամբ լրացված չեն, ինչպես նաև ըստ հրավերի՝ ծավալաթերթ-նախահաշվով պետք է ներկայացվեին արժեքներ, որոնք ներառում էին բոլոր ծախսերը, այդ թվում՝ շահույթը և ԱԱՀ-ն, այնինչ մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի արժեքներում բոլոր ծախսերը ներառված չեն:

4. «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 4.1.5 կետում՝ «քաղաքացիություն» դաշտում նշված է տվյալ անձի ազգությունը քաղաքացիության փոխարեն, իսկ 4.2.5 կետը ընդհանրապես լրացված չէ, ինչպես նաև 4.5 կետի ա, բ, գ ենթակետերից ոչ մեկում նշում չի կատարվել: Հայտում բացակայում է նաև հրավերի 2.6 կետով պահանջվող՝ մասնակցի կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվը: Մասնակցի կողմից ներկայացված հայտի հավելված 1-ում՝ դիմում-հայտարարությունում որպես պատվիրատուի անվանում նշված է ՀՀ ֆինանսների նախարարության **կոմիտե** /ընթացակարգը հայտարարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից/, բացի այդ բացակայում է հայտարարություն/հավաստում առ այն, որ ընթացակարգի շրջանակներում «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ն թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն:

5. Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն որ, «ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվով տրված գները չեն ներկայացվել հազարական դրամով, այլ ներկայացվել են ամբողջական թվերով, սակայն դա չի հակասում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել Ա/Ձ Սամվել Կոշեցյանին, «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին, «Գապ Շին» ՍՊԸ-ին, և «ԷՅՉ ԸՆԴ ԷՅՉ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,

2. «ԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

«ՀՀ ՖՆ-ԳՀԱՇՁԲ-22/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 22-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Հանձնաժողովի անդամներ՝

_____ Վ. Պողոսյան

_____ Հ. Ղազարյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Կ. Սիրունյան

Գնումները համակարգող՝ _____ Վ. Սիմոնյան